Բ.

ԱՅՐԻՑ ԿԱՄ ԳԵՂԱՐԴԱՅ ՎԱՆՔ

I

Պռոշեանների երկրորդ նշանաւոր հոգևոր կեդրոնը Այրիվանքն էր կամ յետագայում և այժմ Գեղարդայ վանք կոչուածը (պատկ. 32). առաջին անունն ստացել է այրերով շրջապատուած կամ նոյն իսկ այրի մէջ շինուած լինելու պատճառով, իսկ երկրորդը նոյնանուն սրբութեան, որ երկար դարեր պահւում էր այստեղ։ Յետնագոյն մատենագրական աւանդութիւնների համաձայն վանքը հիմնուած է նոյն իսկ Լուսաւորչի ձեռքով՝ «հաստատեալ ի սբ. Լուսաւորչէն»(*). այստեղ հանգստացել է Ներսէս մեծ, իսկ պատմագիր Յովհաննէս կաթողիկոս անուանում է «կացուրդ սրբոյն Իսահակայ»(**)։ Մխիթար Այրիվանեցին Ստեփանոս Սիւնեցու վկայաբանութեան մէջ(***) տալիս է նաև տեղեկութիւններ Այրիվանքի միաբան Գրիգոր Գոգիկ միաբանի կեանքի մասին, որ ժամանակակից և ընկերն էր Սիւնեցու, ուսումնակիցն ու աշխատակիցը նորա թարգմանութիւններից մի քանիսի համար. «եւ էր ընկեր սորա (Ստեփանոսի) ի նմին քաղաքէ (Դուին)՝ քհնյ. ոմն Գրիգոր անուն ի սբ. ուխտէն Այրի վանաց, որ է հիմնարկեալ ի սրբոյն Գրիգորէ, ի գլուխ ձորոյն՝ գեղաքաղաքին Գառնոյ»։ Երկուսն էլ «յառաջադէմք ի գիտութի. գրոց եւ յարուեստս երաժշտականութե.»։ Աթէնքում (!) նոքա «ուսան զամ. սահմանս փիլիսոփայութե. իմաստնոց արտաքնոց եւ քաջատեղեակք եղեն ոճաչունչ մեկնչաց», «Յեռեթէոսի տարրական ածարանութեցն» եւ թարգմանում են յունարէնից հայերէն։ Գտնում են և Նիւսացու «Վս. բնութե. մարդոյ եւ կազմութե. կարգ եւ զայս եւս թարգմանեցին»։ Ծանօթանում են Գերմանոս պատրիարքին, առաջարկութիւն են ստանում հաղորդուիլ յոյների հետ, բայց յանձն չեն առնում։ Ապա վերադառնում են Հայաստան և գտնում Օձնեցի հայրապետին մեռած եւ երկիրը նեղուած «ի խպրաց, ի տաճկաց եւ ի յունաց»։ Մխիթար շարունակելով այնուհետև Ստեփանոսի գրական և հովուական գործունէութիւնը Հայաստանում՝ աւելացնում է Գրիգորի մասին. «Իսկ ընկեր սորա Գրիգոր քհայ. մականուն կոչեցեալ Գոգիկ, գնացեալ ի տեղիսն իւր յԱյրիվանս», այնտեղ յառաջադէմ է հանդիսանում երաժշտական եղանակների յօրինման մէջ և երգեր սահմանում տէրունական և սրբոց տօներին։ «Բայց յաղագս քաղցրավանկ եղանակի նր., տնկեցաւ ի նա ախտ ամբարտաւանութե.», որի համար և յանդիմանութիւն է ստանում Այրիվանքը հիւր եկած Ստեփանոսի կողմից։ Գրիգորը զգաստանում է, առանձնանում այնուհետև այրերից մէկի մէջ ճգնելու, ուր և մեռնում է։ «Իսկ յետ բազում ժամանակաց շինեցաւ այր բընակութե. նր. խորան փառացն այ. եւ սեղան պատարագի . . .»։

Ըստ Մխիթար Այրիվանեցու, ուրեմն, նա Ը. դարի առաջին կիսի մարդ էր, մինչդեռ Ալիշան մետասաներորդ դարն է կարծում նորա ժամանակը, բայց առանց որ և է հիմք բերելու(*)։ Տարաբաղդաբար յայտնի չէ, թէ Մխիթարի սկզբնական աղբիւրը որչափ հին է, և ո՞րտեղից է առել Գոգիկի հատուածը, թէեւ բուն Սիւնեցուն վերաբերեալ մասի հնութիւնը մինչեւ Ժ. դար է և աւելի հին ժամանակին է հասնում(**)։

Օրբէլեան Յովհաննէս Ովայեցու մասին պատմում է, թէ լսելով չարախօսների մտադրութիւնը իրեն աքսորելու մասին, «կամաթող լինի աթոռոյն եւ բնակէ միայնիկ ի վանս Այրից»(***)։ Բայց Յովհաննէս պատմագիր կաթուղիկոսն էլ Նսրը ոստիկանի որոգայթներից ազատուելու համար՝ իւր շրջապատողների խորհրդով առ ժամանակ Դուինից փախչում է այստեղ եւ «ապա ելեալ ի վանաց անտի Այրից ի կացրգից սրբոյն Իսահակայ, որ ի ծործորս լերինն Գեղայ ի ձորակի միոջ՝ դէպ ուղիղ գնացաք եւ ելաք ի վերին վանս, ուր կայանք անասնոցն էին» եւ այնտեղից Սեւան(****)։ Ցիրաւի վանքը շինուած է խորը ձորի

(*) Ձեռ. էջմ. № 358 (Լիմ) Վարդանի Աշխարհացոյցը։ Նաև № 2179/2166. 7ա.։

(**) Ղուկ. հրատ. Թիֆլիս. 1912. 335։

(***) Ձեռագիր Ցայսմաւուրք, սեպհականութիւն Մնարի։ Հրատարակել ենք նախ «Սիոն»ի մէջ, ապա առանձին՝ «Մխիթար Այրիվանեցի. Նորագիւտ արձանագրութիւն եւ երկեր». Երուսաղէմ. 1931։

(*) Շնորհալի եւ Պարագայ իւր, 90։

(**) Մխիթար Այրիվանեցի, Նորագիւտ արձանագրութիւն եւ երկեր, եր, 8, § 5։

(***) Ղուկ. հրատ. 168։

(****) Ղուկ. հրատ. 335։